

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ս. Եջմաձին, 11 Գեկեմբեր 1956

Նորին Ամենապատուութեան

Տ. Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյեանին

Յուսատեմի Հայոց Պատր. Տեղապահին

Ս. Յուսատեմ

Քրիստոսի Սուրբ Ծննդեան մեծ եւ սքանչելի աւետիսով կը զիմաւորենք նոր Տարին եւ Միածնի Իջման Ս. Անդանէն կը բերենք Ձերդ Ամենապատուութեան, Ս. Արքայ Միաբանութեան եւ համայն հաւասարեալ ժողովուրդիդ Մեր արագեղ սիրոյ ուղջոյնը եւ ամենաջերմ մաղրանքը բոլորիդ արեւստութեան եւ բարօրութեան համար :

Նոր Տարին որ կուգայ Աստուծոյ յայտնութեան շնորհներովը զեղուն, քող զօրացնէ Ձեր հոգիներուն մէջ մեր նախընտաց լոյս հաւասար, քող ամուր պահպանէ մեր Ս. Եկեղեցոյ միութիւնը եւ քող ամբողջ ու անխռով պահէ համայն ազգը հայոց :

Փառք ի բարձունս Աստուծոյ եւ խաղաղութիւն ընդ Ձեզ :

ՎԱԶԳԷՆ Ա.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Շ Ն Ո Ր Հ Ա Ի Ո Ր Ա Կ Ա Ն Ք

Ս. Արքայ Պատր. Տեղապահ Գերաւործի Տ. Տիրան Արքեպ. Պէյրութէն վերադարձին, ընտրութեան ու պաշտօնական ճանաչման գիրք կառավարութեանն ստացուելուն առիւտ

Հ Ն Ո Ա Գ Ի Բ Ը Ն Ե Ր

Նիւ Եոթ, 26 Նոյեմբեր 1956

Գեր. Տ. Տիրան Արքեպ. Ներսոյեան

Պատրիարքական Տեղապահ

Յուսատեմ

Մենք, Առաջնորդ, Թեմական Խորհուրդ եւ համայն Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցոյ, կը շնորհաւորենք Ձեզ Յուսատեմի

Հայոց Պատրիարքութեան Տեղապահական Արքայ Ձեր երջանիկ վերադարձին առիթով : Կը հաւատամք անկեղծօրէն թէ Ձեր Գերապատուութեան կարող առաջնորդութեան ներքեւ Ս. Արքայոց հոգեւոր կեանքը պիտի վերածաղկի յօգուտ մեր Եկեղեցիին :

ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՅԱՅԵԱՆ
Առաջնորդ Հիւս. Ամերիկայի

Պէյրութ, 17 Գեկեմբեր 1956

Գեր. Տ. Տիրան Արքեպ. Ներսոյեան

Պատրիարքական Տեղապահ

Յուսատեմ

Մտազին եւ անկեղծ շնորհաւորութիւններ Ձեր Տեղապահ ընտրութեան եւ Կառավարական ճանաչման առիւտ :

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ԲԱՐՈՅԵԱՆ

Ամման, Սերոբ Անրիքանեան ընտանիքին :

» , Աւետիս Մանուկեանեան :

» , Արմենակ Տեր Գրիգորեան ընտանիքին (Երկիցս) :

» , Տօք. Արքիմ Փոլատեան (ի զիմաց Զարգայի եւ Ռոսէֆայի հայութեան) :

Հալեպ, Կարապետ Սիւ. Գալպատեան :

Իսթանպուլ, Գարեգին Մ. Վրդ. Գալանճեան :

Ամման, Սուլթանեան, Զաքեան, Պերպրեան, Տումանեան :

» , Բիւզանդ Զօրպանեան եւ Եղբարք :

» , Պետրոս Տումանեան, Ճօն Տարազեան :

» , Աւետիս Զարուբիանեան, Խալիլ Անտուր :

» , Սիրարփի եւ Աբրահամ Զարուբիանեաներ :

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Յուսատեմ, Մուրաթ Մանուկեան :

Բերքլեհեմ, Ար. Միհրան Յովնանեան :

Ամման, Վ. Պ. Պատանեան :

Հալեպ, Եղիշե Բնյ. Փանոսեան :

Կիպրոս, Նուպար Մազուսեան :

Փարիզ, Ս. Գարակէօզեան :

Պէյրութ, Հայ Եկեղեց. Եղբայրակցութիւն :

Փարիզ, Նայի Խաչ. Բնյ. Արունեան :

Նիս, Վահան Մալքեան :

Ե Կ Ե Ղ Ե Տ Ե Կ Ե Ն Գ - Բ Ս Մ Ս Ե Կ Ե Ն Գ

● Կիր. 2 Դեկտ. — Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Լոգ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան: Բարողեց Գեր. Տեղապահ Ս. Լայրը, ներթ ունենալով օրուան ճաշու Աւետարանին (Ղուկ. Թ. 44-50) համարները:

● Բշ. 3 Դեկտ. — Ս. Կոյսի Բնծայման հանդիսաւոր նախատեսակին Ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Շնորհք եպս. Գալուստեան:

● Գշ. 4 Դեկտ. — Ընծայուցն Ս. Աստուածածնի: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց և քարոզեց Գեր. Տ. Շնորհք եպս. Գալուստեան, բնարան ունենալով «Եւ ես եղէց ձեզ 'ի հայր, և զուք եղի չիք ինձ յուստերս և 'ի զտերս» (Բ. Կորնթ. 2. 18): Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ տարեկան հոգեհանգստեան կարգը, Ս. Աթոռոյ բարերար Կիւլլապի Կիւլպէնկեանի, ինչպէս նաև Կիւլպէնկեան գերզատանի համայն ննջեցելոց հոգիներուն համար, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ս. Լոր:

● Կիր. 9 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Լոգ. Տ. Յովսէփ Արղ. Մամուր: Բարողեց Գեր. Տ. Սուրէն եպս. Քէմհանեան, բնարան ունենալով օրուան ճաշու Աւետարանէն «Ինչրեցէ՛ք նախ զարքայութիւն Աստուծոյ ...» (Ղուկ. ԺԲ. 31), ու բացատրեց ազանութեան յառաջացուցած Քնասները մեր բարոյական կեանքէն ներս:

● Ուր. 14 Դեկտ. — Վաղուան նախատեսակը պաշտուեցաւ Ի Ս. Յակոբ: Հանդիսագետն էր Գեր. Տ. Շնորհք եպս. Գալուստեան:

● Եր. 15 Դեկտ. — Ս. Աւսեղեցն Քաղտսի և Բարոյիսմէսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ի Ս. Դիտաղիր: Պատարագեց Լոգ. Տ. Լայկասեր Վրդ. Պայրամեան:

● Կիր. 16 Դեկտ. — Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գեր. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան: Բարողեց Գեր. Տ. Նորայր եպս. Պողարեան, անդրադառնալով երէկուան տօնելի սուրբերուն՝ մեր առաջին լուսաւորիչ Թադէոս և Բարթոլոմէոս առաքելներու գործունէութեան ու ապացուցանելով Լայցեկեղեցոյ առաքելականութիւնն ու ուղղափառութիւնը:

● Եշ. 20 Դեկտ. — Ս. Լարցն եղիպացոց տօնին առթիւ, Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ պատարագեց խոստովանանայր Լոգ. Տ. Մաշտոյ Վրդ. Բարխուսեան:

● Ուր. 21 Դեկտ. — Ս. Կոյսի Յղութեան հանդիսաւոր նախատեսակին Ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Նորայր եպս. Պողարեան:

● Եր. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Աստուածածնի: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց և քարոզեց Գեր. Տ. Նորայր եպս. Պողարեան:

● Կիր. 23 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Լոգ. Տ. Տիրայր Վրդ. Տէր-վիշեան:

● Ուր. 28 Դեկտ. — Վաղուան նախատեսակին Ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տեղապահ Ս. Լայրը:

● Եր. 29 Դեկտ. — Ս. Յակոբայ Մընայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ի Ս. Դիտաղիր: Պատարագեց Լոգ. Տ. Մաշտոյ Վրդ. Բարխուսեան:

● Կիր. 30 Դեկտ. — Ս. Պատարագը Ի Ս. Լընչտակապետ մատոյց Լոգ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան: Բարողեց Գեր. Տ. Շնորհք եպս.:

Պ Ա Ե Տ Օ Ն Ե Կ Ե Ն Գ

● Կիր. 16 Դեկտ. — Կէսօրէ առաջ, Գեր. Տեղապահ Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան, ընկերակցութեամբ Գեր. Տ. Սուրէն, Լայկազուն և Շնորհք Սրբազաններու և Աւագ Թարգման Լոգ. Տ. Լայկասեր Վրդ. Ի, շնորհաւորական այցելութիւն տուաւ Քաղաքիս նորընտիր Կառավարիչ Վսեմ. Առան Սունէս Էլ-Հրիստէնի: Ն. Վսեմութիւնը այս առիթով նորին Սրբազանութեան յանձնեց իր կողմէ ստորագրուած Կառավարութեան ձանաչման գիրը Գեր. Տ. Տիրան Սրբազանի Տեղապահութեան:

— Կէսօրին, Գեր. Տեղապահ Ս. Լոր շնորհաւորութեան եկաւ Երեսփոխան Տօրթ. Եագուպ Զայատին:

● Բշ. 17 Դեկտ. — Գեր. Տեղապահ Ս. Լոր շնորհաւորութեան եկաւ Բեթղէնէմի Քաղաքապետն ու Ոստիկանապետը:

● Գշ. 18 Դեկտ. — Գեր. Տեղապահ Ս. Լոր շնորհաւորութեան եկաւ Անկիլիքան Գեր. եպս. ր:

● Ուր. 21 Դեկտ. — Գեր. Տեղապահ Ս. Լոր շնորհաւորութեան եկաւ Ամերիկեան Հիւպատոսը և LIFE Magazineի Թղթակիրը:

● Եր. 22 Դեկտ. — Կէսօրէ առաջ, Յունաստանի Թեմին Առաջնորդական Տեղապահ Լոգ. Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան օդային զծով մեկնեցաւ Աթէնք:

● Բշ. 24 Դեկտ. — Կէսօրէ առաջ, Իրաքի Թեմին Առաջնորդ Գեր. Տ. Զօսն Ծ. Վրդ. Տէր Յակոբեան մեկնեցաւ Պաղատա:

● Գշ. 26 Դեկտ. — Կէսօրէ առաջ, Եւրոպացոց Ս. Ընկերեան տօնին առթիւ, Գեր. Տեղապահ Ս. Լայրը, ընկերակցութեամբ Գեր. Սրբազաններու և Լոգ. Լայրերու, շնորհաւորական այցելութիւն տուաւ Յրանիսկեանց Գեր. Կիւթոսին, Լատինաց Ս. Պատրիարքին, Պապական Նուիրակին և Անկիլիքան Գեր. եպիսկոպոսին: Իսկ Գեր. Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեան, ընկերակցութեամբ մի քանի Լոգ. Լայրերու, այցելեց Մարտինի եպս. Ին, Լուսեբականաց Մեծաօրին, և Լայ և Յոյն Կաթողիկոսներու Փոխանորդներուն:

● Եշ. 27 Դեկտ. — Գեր. Տեղապահ Սրբազանը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Սուրէն եպս. Քէմհանեանի, Լոգ. Տ. Զուէն Վրդ. Չինչինեանի և Տիրար Կարպիւս Հինչլեանի, ներկայ գտնուեցաւ ընդունելութեան մը՝ Կառավարական տան մէջ:

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1956 թուականի ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբալայրերու տուած հետեւեալ բարեպաշտական նուէրները :

1. — Կ. Պոլսէն, Տէր և Տիկին և որդի Միւրան, Նուարդ և Ստեփան, Ս. Գլխաղբի կը նուիրեն ներմակ ձեռագործ և քառակողմեան ծոպերով վարագոյր մը :
2. — Հելիոպոլիսէն, Էլէրէկցի այրի Տիկին Գլխաղբի Դանիէլեան, մէկ սեղանի ներմակ ծածկոց կը նուիրէ Ս. Գլխաղբի :
3. — Գանձրէքանակ Տիկին Տիրուհի Մխիթարեան և Օր. Անահիտ Խաչիկեաններ, մէկ փխրո կրավիւր գործ գրակալ մը կը նուիրեն Ս. Գերեզմանին Քրիստոսի :
4. — Ապտան (Պարսկաստանէն), Տիկ. Հոփիսիմէ Աշուղեան և Տիկ. Ուսանեա, Ս. Յակոբայ կը նուիրեն 4 հատ քանթիլ կլոր գործեր, աշտանակի տակի իրրև փոսց :
5. — Երուսաղէմէն Այնթապցի Տիկ. Հրանդուհի Թանաշեանը ներմակ սեղանի ծածկոց մը կը նուիրէ Ս. Գլխաղբի :
6. — Պէյրուսէն, Ատանացի Տիկ. Էլիզա Էքմէքեան Սուրբ Գլխաղբին կը նուիրէ 2 հատ յախճապակեայ փոքր ծաղկաման և ասեղնագործ աշտանակի տակի կլոր զարդեր :
7. — Պէյրուսէն, Սեցի Տիկ. Ուսանեա Ֆինանեան, Ս. Յակոբայ Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ մէկ սակի մատանի մը կարմիր քարով :
8. — Պաղտատէն, Պուրացի Վարդուհի Խընկիկեան և Տիգրանուհի Խնկիկեան, երկու քոյրեր, երկու Քրքական զեղին սակի կը նուիրեն Ս. Յակոբայ Աստուածածնայ պատկերներուն :
9. — Երուսաղէմէն, Տիկ. Տիգրանուհի Խնճիճեան, մէկ զեղեցիկ ինքնածեղագործ ներմակ Թաշի վրայ սկիհի ծածկոց մը սակթեւ սրճայիլ, վասն Ս. Յակոբայ տաճարին :
10. — Պաղտատէն, Ամասիացի այրի Տիկին Մարիամ Քերոբ Ժամկոչեան, մէկ սակի մատանի կը նուիրէ Ս. Յակոբայ տաճարի Ս. Աստուածածնայ պատկերին :
11. — Կ. Պոլսէն, Տիկին Սաթենիկ Զիլեան, Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ մէկ ներմակ սեղանի ծածկոց մը և 3 հատ խաչի բռնիչներ : Նոյնպէս, Տիկին Մարի Պէզէլեան կը նուիրէ կապոյտ խաչի բռնիչ մը :
12. — Երուսաղէմէն, Տիգրանակերացի այրի Տիկին Լուսիա Մարտիկեան, լից հատ կանաչ շապիկ կը նուիրէ Ս. Յակոբայ :
13. — Պաղտատէն, Օրիորդ Հրանտյ Աւագեան, Յասմիկ Աւագեան և Օր. Անահիտ Պետրոսեան, մէկական բռնիչ աւետարանի կը նուիրեն Ս. Յակոբայ տաճարին :
14. — Կ. Պոլսէն, Տիկին Հայկուհի Յակոբեան, մէկ աւետարանի բռնիչ կը նուիրէ Ս. Յակոբայ :

- Տիկին Տիգրանուհի Օհանեան մէկ սեղանի փոքր ծածկոց կը նուիրէ Ս. Գլխաղբի :
15. — Ամերիկայէն, Վանեցի, Տէր և Տիկին Մնացական Օհանէսեան, մէկ մեծ զեղին ծածկոց մը կը նուիրէ Ս. Յակոբայ, ձեռամբ ուսուար Վանեցի Ներսէս Օհանէսեանի :
16. — Կ. Պոլսէն, Մովսէս Նուրան Զօպանեան, մետաքսեայ աւետարանի բռնիչ մը կը նուիրէ Ս. Յակոբայ տաճարին :
17. — Հալէպէն, Այնթապցի Տիկին Լեւոնիկ Մանուկեան, մէկ սակի մատանի կարմիր ետրոս քարով կը նուիրէ Ս. Յակոբայ Ս. Աստուածածնի պատկերին :
18. — Հալէպէն, Եղեսացի Տիկին Եսթեր Խարաբեան, մէկ սակի մատանի մը (ալիանս), կը նուիրէ Ս. Յակոբայ Ս. Աստուածածնին պատկերին :
19. — Հալէպէն, Սղբոզցի, Տէր և Տիկին Արմէն Գասպարեան, մէկ արծաթ փոքր կանթեղ կը նուիրեն Ս. Յակոբայ :
20. — Հալէպէն, Այնթապցի, Տիկ. Ալիս Մըլսնեան, մէկ սակի կապոյտ քարով մատանի կը նուիրէ Սուրբ Գլխաղբի :
21. — Այնթապցի Օրիորդ Գեղուհի Իսկէնաէրեան, վարդագոյն ինքնածեղագործ սկիհի ծածկոց մը կը նուիրէ Թեթիկեանի տաճարին :
22. — Բնիկ Երուսաղէմացի Օրիորդ Մարիամ և Մարթա Խաչատուրեան, մէկ կապոյտ իւղաներկ սեղանի ծածկոց մը կը նուիրեն Ս. Ծննդեան Աւագ Խորանին :
23. — Թէհրանէն, Տիկին Անուշ Խաչատուրեան, քանթիլ բանուած քորփուրայ մը կը նուիրէ Ս. Յակոբայ :
24. — Երուսաղէմէն, Տիկին Հայկուհի Նալպանտեան, զեղեցիկ սեղանի ծածկոց մը, ինքնածեղագործ և Ս. Գլխաղբի իւղաներկ պատկերովը, կապոյտ յատակի վրայ, կը նուիրէ Սուրբ Գլխաղբի :
25. — Երուսաղէմէն, Այնթապցի, Օրիորդ Անահիտ Ն. Մէնէշեան, մէկ յայտմաուրքի ինքնածեղագործ կապոյտ յատակի վրայ ծածկոց մը կը նուիրէ Ս. Յակոբայ տաճարին :
26. — Հալէպէն, Այնթապցի, Տիկին Էլիզա Քանթեան, Ս. Յակոբայ պատկերներուն կը նուիրէ մէկ արծաթեայ ձեռք, մէկ սիրտ, մէկ պարզուկ և մէկ զլուխ, ամէնքն ալ շատ բարակ արծաթ թերթերէ շինուած, ձեռամբ Տիկին Մերիա Քէլբանեանի :
27. — Ամանէն, Տիկին ձէմիլէ Սարգիսեան, մէկ կլոր կապոյտ յատակի վրայ «թիւր» ձեռագործ մասի ծածկոց մը կը նուիրէ Ս. Յակոբայ տաճարին :

Լուսարարայէ Ս. Արսոյ